Էդիթ Պրինտ հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ *Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը*

Հաստատություն՝ ԷԼՏԱՌՈԶ

Դաստիարակ՝ Գաբրիելյան Հայաստան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….3

Սաների հայրենաճանաչողության ձևավորման

կարևորությունը ……...4

Նախադպրոցական հաստատություն- Ծնող կապը…..6

Դասի պլան……8

Եզրակացություն……16

Գրականության ցանկ……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական սաների ավագ խմբում հայրենաճանչողության ձևավորման կարևորությունը առավել արդյունավետ է դառնում դաստիարակության և ուսուցման ուղղել դեպի ազգային արժեքներն ու մշակույթը: ՈՒսուցման հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկական հայրենաճանաչողությանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Մենք՝ մանկավարժներս, պարտավոր ենք ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն՝ հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար:

Այդ ոլորտում տարրական պատկերացումների ձևավորման տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային սովորույթները, ընտանեկան հանդիսությունները, տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները:

Փորձը ցույց է տալիս,որ երեխայի հայրենաճանաչողության ձևավորման գործում կարևոր դեր է խաղում ազգային, ծիսական, ընտանեկան, ժողովրդական թեմաներով պարապմունքները և հանդիսությունների մանկականացված միջոցառումները: Դրանք սրտամոտ են երեխային, քանի որ նա այս դեպքում դառնում է մասնակից ու կատարող:Նա արդեն պատկերացում է ունենում դրանց վերաբերյալ և մեծ սիրով ու ոգևորվածությամբ է մասնակցում պարապմունքներին և հանդիսություններին:

Սաների հայրենաճանաչողության ձևավորումը շարունակական պրոցես է և սահմանափակվել մի քանի պարապմունքով , ըստ իս,հնարավոր չէ: Ստորև կներկայացնեմ <<Գրաճանաչության նախապատրաստում >> պարապմունքի պլանը՝ փոձելով տալ պատկերացում իմ աշխատանքային պրոցեսի վերաբերյալ:

Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

ՀՀ մտավոր ներուժի սաղմերն այսօրվա երեխաներն են՝ վաղվա պետության կերտողները: Նախախադպրոցական կրթության ոլորտում ինչպես երեխաների զարգացման բոլոր ուղղություններով, այնպես էլ սաների հայրենաճանաչողության ձևավորումը շատ կարևոր է:

Նախադպրոցական տարիքի երեխայի ընդհանուր զարգացման հիմնական ժամանակահատվածն է: Հայտնի է ,որ այս շրջանում են ձևավորվում նրա մտավոր, ֆիզիկական և հոգևոր որակները:

Ըստ ՀՀ նախադպրոցական կրթության զարգացման նոր հայեցակարգի՝ այդ ոլորտի հիմնական խնդիրներն են՝ճիշտ կազմակերպել երեխաների մանկությունը, նպաստել նրանց ընդունակությունների բացահայտմանը և բնականոն զարգացմանը:

Նախադպրոցական կրթությունը նախատեսում է նաև մայրենի լեզվով հաղորդակցական հմտությունների՝ մտավոր, ճանաչողական և գեղագիտական ունակությունների ձևավորում և զարգացում:

Խիստ կարևոր է երեխաների մեջ ամրապնդել հայրենասիրության գաղափարը, այսինքն՝արթնացնել սեփական տունը, փողոցը, քաղաքը, գյուղը և երկիրը ճանաչելու ցանկություն, ինչպես նաև արթնացնել սեր սեփական տան, փողոցի, քաղաքի, գյուղի ու երկրի նկատմամբ:

ՈՒսուցման համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկական աշխարհաճանաչմանն ուղղված տարբեր գիտելիքների յուրացումը: Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց, շրջապատի և վերջապես հայրենիքի, հայ լինելու նկատմամբ: Հայ երեխայի հայեցի կրթությունը և դաստիարակությունը այժմյան իրականության մեջ խիստ կարևոր է: Մենք՝ մանկավարժներս, պարտավոր ենք ըստ արժանավույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն՝ հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար: Մենք՝ հայերս, մեր չմարվող հիշողությունը արյան միջոցով փոխանցել ենք սերնդեսերունդ: Մենք մեր հիշողության ,մեր պատմության տերն ենք ու ժառանգորդը՝ Հայկ Նահապետից մինչև հավերժություն: ՈՒստի պետք է ուժ առնենք մեր ազգային մեծագույն մանկավարժներից՝ Խ. Աբովյանից, Մ. Նալբանդյանից , Ռ. Պատկանյանից և Ղ. Աշայանից: Նրանցից վերցնենք այն լավագույնը՝ազգային մտածողության, հայրենաճանաչողության մանկավարժական

շարժառիթներն ու ուղենիշները, որոնք այսօր էլ արդիական են:

Մանկապարտեզը համակողմանիորեն զարգացած մարդու ձևավորման՝ բարոյական և հոգևոր արժեքների միսնության ապահովման հենասյուներից մեկն է: Անհրաժեշտ է վաղ հասակից երեխայի մեջ ձևավորել սեր և հետաքրքրություն հայրենաճանաչողության հանդեպ:

Նախադպրոցական կրթության և դաստիարակության շարունակական բարեփոխումներն անհրաժեշտ է նպատակաուղղել հայրենաճանաչողության, ազգային պետականության ամրապնդմանը և ազգային գիտակցությամբ ու պետական մտածողությամբ օժտված քաղաքացիական հասարակության ձևավորմանը:

Այդ ելակետով էլ կարևորում եմ նախադպրոցական տարիքի երեխաների հաղորդակցումը հայ ժողովրդի հարուստ մշակույթին, պատմությանը, հերոսական անցյալին և տեսարժան վայրերին: Պետք է երեխաների մեջ հետաքրքրություն արթնացնել սեփական ժողովրդի անցյալի ու հայրենի երկրի հայտնի տաղանդավոր անձանց հանդեպ:

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակներից է՝ երեխաների մեջ սերմանել և մշակել այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են՝ քննադատական մտածողությունը, հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, երևակայությունը և աշխատանքից հաճույք ստանալու սովորույթը: Այդ նպատակին հասնելու ուղին մանկապարտեզում ուսումնառությունը ինտեգրված պարապմունքների միջոցով կազմակերպելն է: Թեմատիկ պարապմունքների ընթացքում կարևորում եմ գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում: Թեմատիկ ուսուցումն ապահովում է երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը: Բազմակողմանի զարգացած, ուսման մեջ հաջողակ երեխաները մեծանում են հոգատար,աջակցող միջավայրում: Այդիպսի մթնոլորտը զարգացնում է երեխաների մտավոր և լեզվական ունակությունները և ինքնավստահություն ներշնչում նոր ձեռք բերված գիտելիքների կիրառելու համար:

Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունը

Մեր մանկապարտեզում մշակել ենք հայրենաճանաչողության պարապմունքների համակարգ: Ներառել ենք տարբեր մեթոդիկաներ և իրականացրել փուլ առ փուլ: Ծրագրի իրականացման ժամանակ պահանջ է առաջանում կազմակերպել փոքրիկ ամփոփում՝ ծնողների ակտիվ մասնակցությամբ, քանի որ նկատելիորեն մեծացել է ընտանիքի հետաքրքրվածության աստիճանը երեխաների ուսումնառության նկատմամբ:

Ընտանիքը սոցիալականացման առաջին օղակն է, որտեղ յուրացվում են առաջին սոցիալական դերերն ու հարաբերությունները: Ընտանեկան դաստիարակության առավել արդյունավետ կազմակերպման նպատակով հարկավոր է կիրառել ընտանեկան դաստիարակության սկզբունքային մոտեցումներ, որոնք կոչված են ուղղորդելու տվյալ գործընթացը և շտկելու հնարավոր սխալներն ու թերությունները: Ընտանեկան դաստիարակության սկզբունքները գրեթե չեն տարբերվում դաստիարակության ընդհանուր սկզբունքներից:

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական ծրագրի արդյունավետ մասն է կազմում: Համագործակցության արդրունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների մասին: Այդ տեղեկությունները պետք է այնպես փոխանակել, որ լավագույնս ծառայի երեխայի շահերին:

Ծնողներին ուշադիր լսելով՝ կարելի է արժեքավոր տեղեկություններ ստանալ և փոխօգնության բաց հարաբերություններ հաստատել:

Երկկողմանի և կանոնավոր հաղորդակցության միջոցով ծնողներն ու դաստիառակները սերտորեն համագործակցում են՝ ի շահ երեխաների բնականոն զարգացման:

Ծնողների ակտիվ մասնակցությամբ փոքրիկ թեմատիկ ամփոփում կազմակերպելու նպատակով՝ մեր միջին և ավագ խմբերում ամեն ամսվա վերջին ուրբաթ օրը կազմակերպում ենք <<Ընտանիքի ուրբաթ>>, որի ընթացքում ծնողներն ակտրվ մասնակցում են տվյալ թեմայի ամփոփման գործընթացին: Այս ռազմավարությունը որևէ պարտադիր ձևաչափ չունի: Ամեն անգամ տարբեր մեթոդներ են կիրառվում, շտկվում թերությունները, մշակվում նոր մոտեցումներ: Պարտադիր են գործնական մթնոլորտի առկայությունը և հստակ մշակված առաջադրանքները:Մի կարևոր հանգամանք ևս ծնողները, գիտակցելով

ուսումնական գործընթացին ընտանիքի մասնակցության ու սեփական ներդրում ունենալու կարևորությունը, իսկապես նկատում են երեխաների աճը, վերջինիս կողմից մեծահասակին որպես վստահելի գործընկեր ընդունելու և համագործակցային ուսումնառության արդյունավետությունը:

Դասի պլան

ԹԵՄԱՆ՝<<Գրաճանաչության նախապատրաստում>>

ՏԵՍԱԿԸ՝Պատմում՝ նկարների միջոցով

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

Կրթական

Հստակեցնել և ամրակայել երեխաների գիտելիքները՝Հայոց գրերի վերաբերյալ

Ծանոթացնել Մ.Մաշտոցի պատմական առաքելությանը

Դաստիարակչական

Արթնացնել հայրենասիրական զգացումներ և հետաքրքրություն Հայաստանի անցյալի ու ներկայի նկատմամբ, ինչպես նաև գիտակցական վերաբերմունք ձևավորել հայրենիքի զգացողությունն ամուր պահելու առումով: Երեխաների գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ հայրենիքը մեկն է,ուստի չի կարելի այն լքել: Հարկավոր է միշտ սիրել ու պաշտպանել այն:

Զարգացնող

Զարգացնել կապակցված խոսք կառուցելու հմտություններ, ամրապնդել հիշողությունը:

Անհրաժեշտ պարագաներ

Նկարներ թեմայի վերաբերյալ, այբուբեն

Ընթացքը

Երեխաներ ինչպես արդեն գիտենք Մեսրոպ Մաշտոցը ստեղծել է հայերենի տառերը: Մեսրոպատառ առաջին նախադասությունն է. <<Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ , իմանալ զբանս հանճարոյ>>: Մեսրոպ Մաշտոցը ամեն տառին անուն է տվել, թարգմանել է Աստվածաշունչը:

Երգ Մ. Մաշտոց

Պատմեք վանքի մաշված քարեր

Հայր Մաշտոցի կյանքի մասին,

Ինչպես հայոց գիրն արարեց,

Հույս պարգևեց հայոց ազգին:

Թե նա ինչպես զոր ու գիշեր

Իր սաներով իր շուրջն դարձած,

Մի կողմ թողած վայելք ու սեր,

Տառապանքի միջով անցավ:

Կրկ.

Մեսրոպ Մաշտոց երկաթագիր հարոց տառեր,

Դուք մեր կյանքի , դուք մեր փառքի Մասիս սարեր,

Ջրեր անցաք , հրեր անցաք դարձաք հավերժ

Ձեզնով մենք կանք ու կմնանք դար ու դարեր:

Մեսրոպ Մաշտոցին

Լույս սփռեցիր դու մեր ճամփին

Որ չսահենք անդունդն ի վար,

Թույլ չտալով զավակներիդ

Օտարներից տառեր մուրալ:

Գիրդ դարձավ ինքնատիպ զենք

Անխոցելի հզոր վահան,

Ապրելու հիմք ու հուսո հենք

Արևը մեր ամեն հայ տան:

Հավերժացար ու սրբացար

Դառնալով հայրը մեր գրոց,

Արարումդ մեծահանճար

Անմահացրեց ազգը հայոց:

Եկեք անդրադառնանք հայոց այբուբենին.

Դաստիարակ-քանի տառ ու հնչյուն կա այբուբենում

Երեխաներ-այբուբենում կա 39 տառ, 36 հնչյուն

Դաստիարակ-ինչ է տառը

Երեխաներ- տառը արտասանում ենք և գրում

Դաստիարակ-ինր է հնչյունը

Երեխաներ- հնչյունը արտասանում ենք և լսում

Դաստիարակ – քանի տեսակ են լինում հնչյունները

Երեխաներ –հնչյունները լինում են ձայնավոր և բաղաձայն

Թվարկել ձայնավորները

Հնչյունները կազմում են վանկ, եթե բառի մեջ կա մեկ ձայնավոր հնչյուն ապա բառը ունի մեկ վանկ:

Կազմել մեկ վանկանի բառեր՝ տուն, շուն , ուշ, աչք և այլն:



Իմ այբուբենը

Ա-ն արևն է ելած ոտի

Բ-ն բարևն է առավոտի

Գ-ն գնում եմ նորից դասի

Դ-ն դպրոցն է երրորդ մասի

Ե-ն եկել եմ դպրոցից տուն

Զ-ն էլ զանգն է դռան հնչում

Է-ն էլ ինչքան լավ է տանը

Ը-ն էլ ընկեր……..

Թ-ն թվերն են ու թանաքը

Ժ-ն ժամն է ու ժամանակը

Ի-ն իղձերն են մանուկ սրտում

Լ-ն լռեցեք դաս եմ սերտում

Խ-ն խաղալու ժամն է բակում

Ծ-ն ծիրանի ծառն է ծաղկում

Կ-ն կրպակն է մրգով լիքը

Հ-ն հարազատ իմ հայրիկը

Ձ-ն ձմեռն է , ձյունը բակում

Ղ-ն ղողանջը մոտի վանքի

Ճ-ն ճտերն են , ճնճղուկը

Մ-ն մայրիկն ու իր մանուկը

Յ-ն թիվ յոթն

Ն-ն նահապետ Նոյ պապիկը

Շ-ն շնիկն է բակը հսկող

Ո-ն ոչխարն է մեզ բուրդ տվող

Չ-ն չամիչն է, չիրն է բալի

Պ-ն պապիկն է իմ միշտ բարի

Ջ-ն Ջիվանն է ջութակահար

Ռ-ն Ռուբենն է մեր ռազմավար

Ս-ն էլ սիրտն է մեզ ջերմ սիրող

Վ-ն վանքերն են մեր ղողանջող

Տ-ն տատիկն է միշտ հոգատար

Ր-ն բոպեն է մեր խեղճ Ր տառ

Ց-ն ցորենի հացն է անուշ

Փ-ն փնթին է ծույլ ու փեփուշ

Ք-ն քաղաքն է մեր քարակերտ

ՈՒ-ն ուլունքն է հուռութքի հետ

Օ-ն հինգերն են օրագրի մեջ

Ֆ-ն ֆինալը, այսինքն վերջ:

Երգ <<Այբուբեն>>

39 լավ ընկեր , զարդարում են լեզուներ

Բառեր են ստեղծում անսպառ

Եվ կոչվում են տառ.

Ամեն տառ իր տունն ունի

Էջերում այբուբենի, հյուր գնա բոլորի տուն

Եվ դարձիր մի տուն:

Կրկ.

Քեզ ժպտում է ապագան մտքերով բազում,

Այբուբենն է հայկական քո հայոց լեզուն

Շատ ուրիշ գրքեր էլ կան,

Որ նրանք կարդաս,

Այբուբենը հայկական, պետք է իմանաս:

Երգ <<Մայրենի լեզու>>

Ամռանն աղբյուր է, ձմռանը հյուր է

Մոր տաք համբույր է մայրենի լեզուն,

Վայելք ու երգ է, թռիչք ու հևք է

Ու հզոր զենք է մայրենի լեզուն.

Թոթով բալիկ է, լուսե գալիք է,

Բերք ու բարիք է մայրենի լեզուն,

Քնքուշ ծաղիկ է , անուշ տաղիկ է

Շող ու շաղիկ է մայրենի լեզուն:

Կրկ.

Մաշտոցյան լուսե տառեր

Ապրում եք բազում դարեր,

Քեզնով ենք մենք հպարտ,

Քեզնով ենք մենք անպարտ,

Քեզնով ենք անսասան,

Մեր մայր լեզու սրբազան:

Եզրակացություն

Այսպիսով խիստ կարևոր է նախադպրոցական տարիքի մտուր խմբից սկսել երեխաների մեջ ամրապնդել հայրենաճանաչողության գաղափարը, այսինքն՝ արթնացնել սեփական տունը, փողոցը, քաղաքը, գյուղը և երկիրը ճանաչելու ցանկություն, ինչպես նաև արթնացնել սեր սեփական տան, փողոցի, քաղաքի, գյուղի ու երկրի նկատմամբ: Ընդլարնել երեխայի մտահորիզոնը՝դրա համար ստեղծելով անհրաժեշտ պայմաններ:

Մանկապարտեզում կազմակերպվող ցանկացած պարապմունք կամ միջոցառում հետք են թողնում երեխայի հիշողության ու երևակայության վրա: Դրա համար պետք է պարապմունքին պատրաստվել հանգամանորեն, հաշվի առնելով երեխայի տարիքային առանձնահատկությունները, տեղական պայմանները, առկա հնարավորությունները: Բացի ծրագրով նախատեսված պարապմունքներից և միջոցառումներից յուրաքանչյուր մանկավարժ պարտավոր է իր աշխատանքի ընթացքում լինել ստեղծագործ:

Գրականության ցանկ

1. Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր,Երևան,2011

2.Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում , Երևան 2013

3.Krtahartak@editprint.am